ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/25» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 24-ը հոկտեմբերի 2017թ.
ժամը 11[00]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/25» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/25» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Հելի-Ռ. Վ» ՍՊԸ համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- որպես հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» չափանիշը հավաստելու համար ներկայացված նախկինում կատարված N ՇՀԱՊՁԲ-9/12-7 ծածկագրով պայմանագիրը կնքված է տվյալ ժամանակ գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա, ուստի պետք է ներկայացվեր նաև պայմանագրին կից կնքված համապատասխան համաձայնագիրը, ըստ որի նախատեսվում են ֆինանսական միջոցներ և գնման, վճարման ժամանակացույցեր,
- ներկայացված պայմանագրով և հաշվիվ ապրանքագրերով մատակարարված ապրանքների ընդհանուր գումարը կազմում է 5,700,000 ՀՀ դրամ, սակայն ներկայացված է ընդամենը 2,736,000 ՀՀ դրամի հանձնման-ընդունման արձանագրություն (պակաս է պայմանագրով նախատեսված գնից),
- ներկայացված տեխնիկական բնութագիրը ամբողջական չէ, մասնավորապես՝ բացակայում են հրավերով պահանջվող տեղեկությունները՝ ապրանքի պիտանելիության ժամկետի և փաթեթավորման վրա անհրաժեշտ գրառումների մասին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկեց մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկեց անհամատասխանությունները և ներկայացված տեխնիկական բնութագիրը հանձնաժողովի կողմից գնահատվեց հրավերի պահանջներին բավարարող:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.2 27.10.2017թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման հատկանիշները և ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/25» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/25» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԳ-ԳՀԱՊՁԲ-9/25» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը՝ ժամը 11[00] ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳԳԿՀ վայրերի նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Վ. Գասպարյան
Գնահատող		Հ. Ավետիսյան
Գնահատող		Ն. Հարությունյան
Գնահատող		Ս. Նիկոլյան
Գնահատող		Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝		Ա. Մաղաքյան

27.10.2017թ.